ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 447-Ա

23 օգոստոսի 2024 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՇԱԽՄԱՏԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի և «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի և 16-րդ հոդվածի պահանջներով

որոշում եմ՝

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի շախմատի 2024 թվականի մարզային առաջնության կազմակերպման և անցկացման կազմկոմիտեի կազմը՝ համաձայն N1 հավելվածի:

2) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի շախմատի 2024թվականի մարզային առաջնության կանոնակարգը՝ համաձայն N2 հավելվածի:

3) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի շախմատի 2024 թվականի մարզային առաջնության անցկացման մրցավարական հանձնաժողովի կազմը՝ համաձայն N3 հավելվածի:

2. Կազմկոմիտեին՝ միջոցառման ավարտից հետո ներկայացնել հաշվետվություն:

3. Մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ Լուսինե Վարդանյանին՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի շախմատի 2024 թվականի մարզային առաջնության անցկացման օրը համապատասխան հաստատությունում ապահովել մասնակիցների առաջին բժշկական օգնությունը:

4. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ Մարինե Գյարզոյանին՝ միջոցառման անցկացման գործընթացն իրականացնելու համար ապահովել սույն որոշման առաքումը մարզի համայնքներ:

23.08.2024

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 3710840503

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N1
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2024 թվականի օգոստոսի 23 -ի
N 447-Ա որոշման

ԿԱԶՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՇԱԽՄԱՏԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱԶՄԿՈՄԻՏԵԻ

Զազյան Կարեն - մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ /նախագահ/
Հարությունյան Վանիկ– մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ
Վարդանյան Լուսինե – մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ
Չարվադարյան Գեղամ - մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ
Շահբազյան Հասմիկ - մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փոստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ
Հայրապետյան Մերուժան - ՀՀ Գեղարքունիքի մարզում Հայաստանի շախմատի ակադեմիայի ներկայացուցիչ
Խլղաթյան Խոսրով - «Գեղամա աշխարհ» թերթի գլխավոր խմբագիր

ԳԼԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ

Ստորագրող
ՄԱՐԻՆԵ ԳՅԱՐԶՈՅԱՆ
7702860120
2024-08-23 09:30:15 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

ՄԱՐԻՆԵ ԳՅԱՐԶՈՅԱՆ

Հավելված N2
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2024 թվականի օգոստոսի 23 -ի
N 447-Ա որոշման

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՇԱԽՄԱՏԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ

ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Նպաստել համայնքներում շախմատ մարզաձևի մասսայական զարգացմանը.
- ի հայտ բերել շնորհալի մարզիկներին՝ նրանց հետագա մարզական կատարելագործումն ապահովելու համար.
- հանրապետական մրցումներին մասնակցության ապահովում:

ՄԱՐԶԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի շախմատի 2024 թվականի մարզային առաջնության /այսուհետ՝ մարզային առաջնություն/ ընդհանուր ղեկավարումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունը:

ՄԱՐԶԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ, ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ՓՈՒԼԵՐԸ

Մարզային առաջնությունն անցկացվում է մեկ փուլով, որին կարող են մասնակցել ՀՀ Գեղարքունիքի մարզում գործող Հայաստանի շախմատի ակադեմիայի մասնաճյուղերում կազմակերպված մրցումների արդյունքում երեք մրցանակային տեղեր գրաված շախմատիստները: Այն կանցկացվի 2024 թվականի օգոստոսի 31-ին՝ Գավառի շախմատի տանը:

Մրցումների սկիզբը՝ ժամը 10^{30}-ին:

ՄՐՑՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

Մարզային փուլին կմասնակցեն Հայաստանի շախմատի ակադեմիայի Գավառի, Մարտունու, Վարդենիկի, Վարդենիսի, Ճամբարակի, Սևանի և Սարուխանի մասնաճյուղերում կազմակերպված մրցումներում 1-ին, 2-րդ և 3–րդ տեղերը գրաված շախմատիստները: Մարզային առաջնությունը կանցկացվի շվեյցարական մրցակարգով: Մարզային առաջնությունն անհատական է: Մեկ խաղափուլում յուրաքանչյուր խաղացողի տրվում է 25 րոպե ժամանակ՝ յուրաքանչյուր քայլի համար 5 վրկ. հավելումով: Առաջնությունը կանցկացվի ՖԻԴԵ-ի կանոնակարգի համաձայն: Մարզային փուլն անցկացնում և արդյունքներն ամփոփում է մրցավարական հանձնաժողովը: Մարզային առաջնությունում առաջին և երկրորդ տեղերը գրաված շախմատիստները կմասնակցեն շախմատի մեծահասակների հանրապետական մրցումներին:

ԾԱԽՍԵՐԸ

Մարզային առաջնության մասնակցության հետ կապված ծախսերը՝ ճանապարհածախս և սնունդ հոգում են համապատասխան համայքները և կազմակերպությունները:

ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ

Մարզային առաջնությունում 1-ին, 2-րդ և 3-րդ տեղ գրված շախմատիստները կպարգևատրվեն հավաստագրերով և հուշանվերներով:

ՀԱՅՏԵՐԸ

Մարզային առաջնության մասնակցության նախնական հայտերը ներկայացվում են ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն՝ մարզային փուլի մրցումներից 2 օր առաջ, իսկ անվանական հայտերը՝ մրցավարական հանձնաժողովին՝ մրցումների օրը:

ԳԼԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ

Ստորագրող
ՄԱՐԻՆԵ ԳՅԱՐԶՈՅԱՆ
7702860120

2024-08-23 09:31:30 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

ՄԱՐԻՆԵ ԳՅԱՐԶՈՅԱՆ

Հավելված N 3
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2024 թվականի օգոստոսի 23 -ի
N 447-Ա որոշման

ԿԱԶՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՇԱԽՄԱՏԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄՐՑԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Չարվադարյան Գեղամ - մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ /պատասխանատու/

Հայրապետյան Մերուժան - ՀՀ Գեղարքունիքի մարզում Հայաստանի շախմատի ակադեմիայի ներկայացուցիչ /գլխավոր մրցավար/

Սարգսյան Կարո - Հայաստանի շախմատի ակադեմիայի Գավառի մասնաճյուղի մարզիչ /քարտուղար/

Հայրապետյան Արամայիս – Հայաստանի շախմատի ակադեմիայի Մարտունու մասնաճյուղի մարզիչ / մրցավար/

Վարդանյան Աշոտ – Հայաստանի շախմատի ակադեմիայի Սևանի մասնաճյուղի մարզիչ /մրցավար/

Պետրոսյան Մարգարիտ – Հայաստանի շախմատի ակադեմիայի Վարդենիսի մասնաճյուղի մարզիչ/ մրցավար /

Մարտիրոսյան Գարիկ – Հայաստանի շախմատի ակադեմիայի Ճամբարակի մասնաճյուղի մարզիչ/մրցավար/

Արզումանյան Սամվել - Հայաստանի շախմատի ակադեմիայի Վարդենիկի մասնաճյուղի մարզիչ/ մրցավար/

Թորոյան Գնել - Հայաստանի շախմատի ակադեմիայի Սարուխանի մասնաճյուղի մարզիչ/ մրցավար/

ԳԼԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ

Ստորագրող
ՄԱՐԻՆԵ ԳՅԱՐԶՈՅԱՆ
7702860120

2024-08-23 09:32:47 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

ՄԱՐԻՆԵ ԳՅԱՐԶՈՅԱՆ